,, ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆ,, ՀԻՄՆԱԴՐԱՄ

3905, ՀՀ ք.Դիլիջան, Պարզ լճի 5, 24/1, 26/1
հեռ. +374 (060)71-30-00, (060)71-30-30

Ելից № 72-23
«17» 10 2023

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

պարոն՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավանեսյան

Հայտնում ենք, որ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար 2023 թվականի սեպտեմբերի 20-ին հայտարարված կենցաղային տեխնիկա և էլեկտրական սարք-սարքավորումների ձեռքբերման ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-23/8 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ն, որի կողմից ներկայացված հայտի գնահատման արդյունքում հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի ի կողմից չի ներկայացվել այլ անձի կողմից ստորագրված փաստաթղթերի լիազորությունները փաստող փաստաթուղթը:

Հանձնաժողովը 03.10.2023թ-ին որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետով սահմանված պահանջները:

05.10.2023թ-ին Հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակցի կողմից սահմանված ժամկետում և կարգով՝ ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները, բացառությամբ այն հանգամանքի, որ «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի կողմից չի ներկայացվել այլ անձի կողմից ստորագրված փաստաթղթերի լիազորությունները փաստող փաստաթուղթը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջների համաձայն և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով

սահմանված պահանջները կիրառելու նպատակով «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել Մեծամոր համայնքի ղեկավարին՝ «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ՝ ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող՝ Է. Ավագյան
հեռ. 094342219

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆԻ

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-23/8 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից 09.10.2023թ-ի զեկուցագրով «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, *պարզեցի հետևյալը.*

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի ներկայացրած փաստերը և պահանջը.

Գնահատող հանձնաժողովի նախագահը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 09.10.2023թ-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար 2023 թվականի սեպտեմբերի 20-ին հայտարարված Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ն, որի մասնակցության հայտի գնահատման արդյունքում հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի կողմից սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով չեն պահպանվել հրավերով սահմանված վավերապայմանները, Հավելված 1-ով ներկայացված դիմում-հայտարարության փաստաթղթում բացակայում է սպասարկող բանկի անվանումը և բանկային հաշվեհամարը, միաժամանակ Հավելված 1-ում՝ 2-րդ կետով սահմանված ընթացակարգի շրջանակում անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին հայտարարությունում բացակայում է «անբարեխիղճ մրցակցություն» եզրույթը: Ներկայացված փաստաթղթերը ստորագրված են այլ անձի կողմից, ում լիազորությունները փաստող փաստաթուղթը բացակայում է:

Հանձնաժողովը 03.10.2023թ-ին որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետով սահմանված պահանջները:

05.10.2023թ-ին Հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակցի կողմից սահմանված ժամկետում և կարգով՝ ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունների

շտկված տարբերակները, բացառությամբ այն հանգամանքի, որ «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի կողմից չի ներկայացվել այլ անձի կողմից ստորագրված փաստաթղթերի լիազորությունները փաստող փաստաթուղթը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջների համաձայն և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել "Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի տնօրենին՝ «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարված Ընթացակարգի շրջանակներում մասնակցության հայտ ներկայացրած «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի մասնակցության հայտի գնահատման արդյունքում հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ:
2. Հանձնաժողովը 03.10.2023թ-ին որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետով սահմանված պահանջները:
3. 05.10.2023թ-ին Հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակցի կողմից սահմանված ժամկետում և կարգով՝ ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները, բացառությամբ այն հանգամանքի, որ «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի կողմից չի ներկայացվել այլ անձի կողմից ստորագրված փաստաթղթերի լիազորությունները փաստող փաստաթուղթը:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի տնօրեն Գ. Սարգսյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով Գնահատող

հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Կարգի 41-րդ կետի համաձայն, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին

ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն, եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝

«ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի կողմից «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարված Ընթացակարգին ներկայացվել է մասնակցության հայտ:

«ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի կողմից մասնակցության հայտի գնահատման արդյունքում հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ:

Գնահատող հանձնաժողովը 03.10.2023թ-ին նիստը կասեցրել է 1 աշխատանքային օրով և նույն օրը ծանուցմամբ առաջարկել է «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ին 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են մասամբ, մասնավորապես չի ներկայացվել Ընթացակարգի հրավերով պահանջվող այլ անձի կողմից ստորագրված փաստաթղթերի լիազորությունները փաստող փաստաթուղթը:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացրած հիմքերը՝ «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:

2. «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

Մասնակցի						
			գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	**խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը**	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	ցուցակում ներառելու մասին պատվիրատուի տնօրենի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
«ՎԱՀԱԳՆ ԿԵՍՈՅԱՆ» ԱՁ	74429213	ՀՀ, մ., Գեղարքունիք, գ. Աստղաձոր 24փ. Տ. 1	X			09.10.2023թ. ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-23/8

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ՝ **ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ**